




CHILDREN
OF ARMENIA
FUND



Մամուլի հաղորդագրություն
10. 07. 2020 թ.

Կրթաթոշակի հնարավորություններ ՔՈԱՖ-ի շահառու գյուղերի ուսանողների համար

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) շրջանավարտների համար բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու **կրթաթոշակային** նոր հորիզոն է բացվում: Հայ կրթական հիմնարկության (ՀԿՀ) և ՔՈԱՖ-ի միջև կնքված **հուշագիրը** թույլ է տալիս գյուղաբնակ երիտասարդներին հոգալ ուսման վարձը և աշխատել կարիերայի զարգացման ուղղությամբ:

Մրցութային կարգով ընտրված կրթաթոշակառուները ոչ միայն ուսման վարձի փոխհատուցում են ստանում, այլև ՔՈԱՖ-ի կողմից առաջարկվող մենթորության և պրակտիկայի հնարավորություն են ունենում, մասնակցում են աշխատունակության հմտությունների զարգացման դասընթացներին, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ գիտելիքներ են ձեռք բերում անգլերենից և SS գրագիտությունից, որ հովանավորում է ՀԿՀ-ն:


«Գյուղաբնակ երիտասարդների ուսման անընդհատությունն ապահովելու, բուհական կրթության և կարիերայի զարգացման հնարավորություններ ստեղծելու գործընթացը ՔՈԱՖ-ի ծրագրերի անբաժանելի մասն է: Մենք ուրախ ենք, որ դաշտում գործող կազմակերպությունները ևս կարևորում են մարզային առաջխաղացումը և երիտասարդներին խրախուսում շարունակել ուսումը՝ չընկրկելով ուսման համար վճարելու խոչընդոտներից»,- ընդգծեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:

Ընտրված ուսանողներն էլ, իրենց հերթին, պետք է ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերեն, չունենան կրկնակի քննություններ կամ վերաքննություն: Առանձին ուշադրություն է դարձվում ուսանողի անհատական սոցիալական պատասխանատվությանը. կրթաթոշակառուն իր գյուղում կատարում է 120 ժամ կամավորական աշխատանք՝ նպաստ բերելով սեփական համայնքի զարգացմանն ու առաջխաղացմանը:

«Մենք հավատում ենք, որ ուսանողները Հայաստանում ապագան կերտողներն են: Տարիներ շարունակ մենք ներդրում ենք կատարում Հայաստանի երիտասարդների կրթության գործում: Այս համատեքստում ուրախ ենք մեկտեղել մեր ջանքերը ՔՈԱՖ-ի հետ, որ տասնամյակից ավելի զբաղվում է այդ նույն երեխաների կրթությամբ և դաստիարակությամբ»,- նշեց Հայ կրթական հիմնարկության գործադիր տնօրեն **Արմինե Հարոյանը**:



CHILDREN
OF ARMENIA
FUND



ՀԿՀ-ի կողմից արդեն իսկ ընտրված՝ ՔՈԱՖ շրջանավարտների կրթաթոշակներն ամեն տարի կթարմացվեն, եթե ուսանողը բարեխղճորեն կատարի իր պարտավորությունները ու ձեռք բերի բուհի բակալավրի աստիճան կամ էլ շարունակի ուսումը մագիստրոսի, ասպիրանտի կոչումների համար:

Հայ կրթական հիմնարկության կրթաթոշակային ծրագիրը Հայաստանում մեկնարկել է 2007 թվականից՝ տալով 1000-ից ավելի շրջանավարտներ, որոնց 89 տոկոսն այս պահի դրությամբ աշխատում է ու կայանում մասնագիտական ասպարեզներում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:


Հայ կրթական հիմնարկության (ՀԿՀ) մասին

Հայ կրթական հիմնարկությունը հիմնադրվել է 1950 թվականին Լոս Անջելեսում՝ աջակցելու հայ ուսանողներին և կրթական հաստատություններին: Վաղ տարիներին ՀԿՀ-ն դպրոցներ է հիմնել Մերձավոր Արևելքում, այդ թվում՝ Լիբանանում, Հունաստանում և Սիրիայում: 1960-1970 թթ. ՀԿՀ-ն ԱՄՆ-ում ֆինանսավորում էր հայկական ամենօրյա դպրոցներին: 1986 թ. UCLA-ի համալսարանում հիմնադրվեց Ռ. Հովհաննիսյանի անվան նորագույն պատմության ամբիոնը, որի համար Հայ կրթական հիմնարկությունը նվիրաբերեց \$500,000:

1988 ավերիչ երկրաշարժից հետո Հայ կրթական հիմնարկության ուշադրությունն ամբողջովին ուղղվեց դեպի Հայաստան, և 1991 թ. անկախացումից հետո հիմնարկությունն իր գրասենյակը բացեց Երևանում: Այս տարիների ընթացքում Հայ կրթական հիմնարկությունը 200-ից ավելի դպրոց է վերանորոգել ու



CHILDREN
OF ARMENIA
FUND



հիմնանորոգել Հայաստանում, Արցախում և Զավախքում: Հարյուրավոր ուսանողներ տարիներ շարունակ ստացել են կրթաթոշակներ՝ ուսման ամբողջական վճարի չափով: